«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Տարեկան հաշվետվություն

2023 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին 3

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 4

1. «ԴԻԼԵՄԱ» հաղորդաշար 4

2. Հայ-լեհական փորձագիտական կլոր սեղան 12

3. ԱՔՀԿ-ի ներկայացվածությունը մեդիայում և հանրային դիսկուրսում 13

Ֆինանսական հաշվետվություն 14

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ 15

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ 16

Կազմակերպության մասին

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) վերլուծական կենտրոն է, որն զբաղվում է հասարակական, քաղաքական, անվտանգության և այլ ոլորտներին առնչվող խորքային փորձագիտական հետազոտություններով, վերլուծություններով և խորհրդատվությամբ:

Կազմակերպության նպատակն է՝ լուսաբանել և վերլուծել Հայաստանի, տարածաշրջանի և միջազգային մակարդակով ծավալվող ռազմաքաղաքական գործընթացները, գնահատել սպառնալիքները, նախանշել հակազդման ռազմավարություններ, առաջարկել քաղաքական կանխատեսումներ և հանրայնացնել արդյունքները՝ հիմնվելով փաստարկված ուսումնասիրությունների վրա:

Կազմակերպությունն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր և նախաձեռնություններ, ներառյալ՝ հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, դասընթացներ և փորձագիտական քննարկումներ: Բացի այդ, կազմակերպությունը մշակում և հրապարակում է գիտական, վերլուծական և տեղեկատվական նյութեր անվտանգային քաղաքականության, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության սպառնալիքների, ինչպես նաև արդի այլ քաղաքական խնդիրների վերաբերյալ:

Իր նպատակների և խնդիրների իրագործման շրջանակներում կազմակերպությունը համագործակցում է պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանում գործող հասարակական և մասնագիտական կառույցների հետ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնի գործունեությունը 2023 թվականին կենտրոնացած է եղել երկու հիմնական ուղղության՝ «Դիլեմա» հաղորդաշարի նախաձեռնման և հաղորդակցության դաշտում ակտիվ մասնակցության վրա, ինչն ապահովվել է հարցազրույցներով հանդես գալու, մամուլի ասուլիսների, քննարկումների և բանավեճերի, ինչպես նաև վերլուծական հոդվածների ու հետազոտությունների հրապարակման միջոցով:

1. «ԴԻԼԵՄԱ» հաղորդաշար

2023 թվականին Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը և Բուն TV-ն համատեղ մեկնարկել են «**Դիլեմա**» հաղորդաշարը, որը նվիրված է անվտանգության և ժողովրդավարության հիմնարար խնդիրների վերլուծությանը: Հաղորդաշարի շրջանակներում անդրադարձ է արվել տարածաշրջանային անվտանգության մարտահրավերներին, կիբերանվտանգության աճող սպառնալիքներին, ընտրական գործընթացների թափանցիկությանը, ինչպես նաև բնապահպանական քաղաքականության հրատապ հարցերի: Տարվա ընթացքում հեռարձակվել է 40 հաղորդում, որոնք զգալի դիտելիություն են ապահովել՝ վկայելով հանրության բարձր հետաքրքրության և քննարկվող թեմաների արդիականության մասին:

Հաղորդումների ամբողջական ցանկը

1. Ենթակառուցվածքներ
2. Հայաստանը և ռազմաքաղաքական կառույցները
3. Կիբերանվտանգություն
4. ՁՈՒ բարեփոխումների օրակարգ
5. Կլիմայական փոփոխություններ և շրջակա միջավայրի դեգրադացիա
6. Տեղեկատվական անվտանգության և ապատեղեկատվության հիմնահարցեր
7. Հայաստան-Իրան հարաբերություններ
8. Ջրերի կառավարման խնդիրներ
9. Հայաստան-Վրաստան հարաբերություններ
10. Սևանա լճի խնդիրներ
11. Անկախ հանրապետություն. ինքնության հիմնահարցերը և դրանց ազդեցությունն անվտանգության վրա
12. Հակահետախուզություն
13. Հայաստան-Թուրքիա հարաբերություններ
14. Արտագաղթ
15. Հայ-ադրբեջանական հարաբերությունները ղարաբաղյան հիմնահարցից անդին
16. Ղարաբաղյան հիմնահարցի ներկայիս վիճակը
17. Հայաստան-ԱՄՆ հարաբերություններ
18. Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ
19. Մարդու իրավունքների պաշտպանություն և կարողունակ քաղհասարակություն
20. Եռգաղութային խոսույթը
21. Արտահերթ թողարկում
22. Արտահերթ թողարկում
23. Արտահերթ թողարկում
24. Արտահերթ թողարկում
25. Արտահերթ թողարկում
26. Ռուս-ուկրաինական կոնֆլիկտ. ռուսական կայսերապաշտությունը և Հայաստանը
27. Հայաստան-ԵՄ հարաբերություններ
28. Պրահյան գործընթաց
29. Տարածաշրջանի փակում
30. Հայաստանը և Եվրասիական ինտեգրացիոն գործընթացները
31. Հայաստան-Սփյուռք
32. Աշխարհակարգը և դրա փոփոխությունները վերջին 5 տարվա ընթացքում
33. Կոռուպցիան և դրա հետևանքները
34. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը. ոչ բլոկային պետության հնարավորությունները
35. Հայկական մշակույթը և գլոբալիզացիան
36. Ո՞ւր է հասել բանակցային գործընթացը
37. Քաղաքաշինությունը և տարերային աղետները
38. ՀՀ ֆինանսները և տնտեսությունը
39. ՀՀ զինված ուժերի բարեփոխումները
40. 2023 թվականի ամփոփում

2. Հայ-լեհական փորձագիտական կլոր սեղան

2023 թվականի նոյեմբերի 14-ին «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ-ն, համագործակցելով Հայաստանում Լեհաստանի դեսպանատան և լեհական Միրոշևսկի վերլուծական կենտրոնի հետ, Երևանում կազմակերպել է հայ-լեհական փորձագիտական կլոր սեղան՝ նվիրված միջազգային և տարածաշրջանային անվտանգության հիմնական մարտահրավերներին:

Միջոցառման հիմնական մասը՝ պանելային քննարկումները, նվիրված էին տարածաշրջանային անվտանգության մարտահրավերներին, արտաքին դերակատարների դերի փոփոխություններին, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերին:

Միջոցառմանը մասնակցել են հայ և լեհ փորձագետներ, ինչպես նաև մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, ԱԳ փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը և Հայաստանում Լեհաստանի դեսպան Պյոտր Սկվեչինսկին:

3. ԱՔՀԿ-ի ներկայացվածությունը մեդիայում և հանրային դիսկուրսում

2023 թվականն Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնի համար եղել է ակտիվ ներգրավվածության տարի՝ թե՛ հանրային և միջազգային փորձագիտական քննարկումներում, թե՛ լրատվամիջոցներում, թե՛ միջազգային վերլուծական հարթակներում: ԱՔՀԿ նախագահ Արեգ Քոչինյանը 2023 թվականին շուրջ 100 հարցազրույց է տվել ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային լրատվամիջոցներին, մասնակցել է շուրջ մեկ տասնյակ բանավեճի: Բացի այդ, նա տեղական և արտասահմանյան պարբերականներում հրապարակել է մոտ երկու տասնյակ վերլուծական հոդված՝ անդրադառնալով տարածաշրջանային և գլոբալ անվտանգության հիմնախնդիրներին:

Կենտրոնի փորձագետ Ռոբերտ Ղևոնդյանը մասնակցել է ավելի քան 50 հարցազրույցի, հանդես եկել տասնյակ մասնագիտական քննարկումներում և բանավեճերում, հրապարակել է մի շարք գիտական հոդվածներ՝ նվիրված միջազգային հարաբերություններին և քաղաքական գործընթացների վերլուծությանը:

Ֆինանսական հաշվետվություն

Մուտքեր	ՀՀ դրամ
«Բուն» գիտամշակութային հիմնադրամ	10,450,000
Նվիրատվություն. Արեգ Քոչինյան	10,000
Ընդամենը	**10,460,000**
Ծախսեր	ՀՀ դրամ
Աշխատավարձ	4,427,500
Հաշվապահական և իրավաբանական ծառայություններ	429,000
Բանկային ծախս	39,500
Հարկային վճարումներ	2,417,150
Փորձագետների աշխատանքների հոնորարներ	526,500
Հաղորդաշարի պատրաստում	2,538,150
Ընդամենը	**10,377,800**

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Դեմոկրատիայի ազգային հիմնադրամ (NED)

Իրազեկ քաղաքացիների միավորում

Բուն TV (Boon TV)

«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

www.rcsp.am

info@rcsp.am

+374 55 342 639

https://www.facebook.com/RCSPNGO